ԻԲ

ԳԱԲԵՂԵԱՆՔ[1]

Ը ցանկայի բաղմարդիւն Հայր Ալիշանի ուշադրութիւնը Խալեազի և Սինակի վերան դարձնել։

Ըստ իս հինն Գաբեղեանք այս երկու ընդարձակ լեռնահովիտներէն մինն լինելու է . . . որոց մինն, որպէս գիտենք, բուն Ալաշկերտի դաշտի յարևմուտս բարձր գիրք մի բռնած է Խալեազ անունով, երկրորդ յարևելս Սինակ անունով հանդէպ իրարու։

Առաջնոյն մէջ մօտ 20 քրդական գիւղեր կան, Գալբալու և Գաբռ գիւղերն ևս այս տեղ են, որք ինձ կարծել կտան թէ Գաբեղեան անուան աղաւաղումն եղած լինին։

Երկրորդի մէջ այս օր 160 տան մօտ Եզտի և Թուրք և քրդ. ժողովուրդ կը բնակին։

Երկուքին մէջ ևս Մարգամիր (Թագաւորական

---

1. Թող ներող լինին հայ բանասէրք, որ Բագրեւանդայ մէջ կարգ մի վայրերու նախնական անուն տալ համարձակած եմ, որոց վերայ երկար որոճալով. եթէ տեղ տեղ չեմ յաջողած՝ գոնէ կը յուսամ որ պատմագիրներուն հետաքրքրութիւնը պիտի շարժի ճիշդն դուրս բերելու համար։